

ԱՍՏՂԱԾԱՂԻԿՆԵՐՈՒՍ

Աստրային

* * *

Այսօր դարձեալ զըտայ ես քեզ,
 Որբի նըման մինակ ու հեզ,
 Մշուշապատ պարտէղիս խոր,
 Ծաղիկ, դէմքի նըման աղուոր,
 Բուսած հողին վըրայ խոսկան,
 Մէզ ու մըշուշ իջած վըրան,
 Այլ միշտ սիրուն, առոյգ, սլացիկ,
 Շաղ ու շողով թաց, թափանցիկ.
 Ձեռքի նըման բաց ու լեցուն,
 Ակնարկի պէս վառ ու ժպտուն,
 Իմ նախընտրած քնքուշ ծաղիկ,
 Իմ մենութեան ընկեր գողտրիկ...
 Թերթերուդ մէջ երբեմն թաքուն,
 Արցունքի մը շիթին հանդոյն՝
 Ինչպէս աչքերն իմ վշտացած
 Դուն ալ ցօղիկ մ'ունիս պահած...
 Դուն տեսիլք ես աչնան մէջ ցուրտ,
 Լոյսի խոստում դարնանամուտ,
 Մեղրախորիսիս ես աստղածեւ,
 Ծաղկամանիս դարդն ու պարզեւ:
 Մըտերմութիւն դաղտնաժըպիտ,
 Աչքերու պէս քաղցր ու վըճիտ,
 Փոքրիկ գոհար բիւրեղային,
 Հոգեհրմայ ու միշտ ներկայ,
 Մերթ խառնըած անշուք խոտին:
 Աչխատանքի սեղանիս վրայ...:

Յաջորդ Մայիսը լուսաղէմ
 Արդեօք դարձեալ ես կ'ողջունեմ...
 Կ'ունենամ իմ էութեան խոր
 Բընութեան տօնն այս լուսածոր...
 Դուն՝ թիթեռ մը թերթերուդ մէջ,
 Ես՝ ներշնչում մը սիրատենչ.
 Դուն՝ շողիկ մը բաժակիդ ծոց,
 Ես՝ քերթուած մը սրտիս մէջ բոց...
 Ա՛խ, երանի՛, ըլլանք կրկին,
 Լուսաղեղ ծոցն այս ծաղկոցին:

* * *

Իմ սիրական, անշուք ծաղիկ,
 Իմ որբ ընկեր սիրաբաղձիկ,
 Եթէ չըլլամ ես դալ դարնան
 Այս պարտէղին մէջ հոտեւան,
 Լըսէ՛, ծաղիկ իմ մըտերիմ,
 Ամէն աչնան հաւատարիմ՝
 Պիտի դարձեալ ըստասեմ քեզ
 Կարօտով, լուռ ու սիրակէզ,
 Տեղ մը, հեռուն, դամբանիս խոր...
 Եկո՛ւր թերթել պըսակդ աղուոր.
 Եկո՛ւր, աստղիկ իմ լուսառէջ,
 Ծաղկիկ չիրմիս քարերուն մէջ:...

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ

Ես՝ նետահար չըբի եղնիկը պարմանի՝
 Ձոր ոտքերուդ այս առաւօտ բերի ընծայ.
 Բայց քու սիրոյդ նետէն իմ սիրտս է վիբաւոր.
 Սիրոյդ վէրքէն դաղտնի ո՛րքան տանջըւեցայ:

Դըղեակիդ զով պուրակին մէջ ան պիտի քեզ
 Ջըւարճացնէ եւ պիտի դայ աղը լիզել
 Ափիդ մէջէն, երբոր ուզես քեզի կանչել
 Վայրի եղնիկն ընտելացած քըրոջ մը պէս:

Անոր վըճիտ աչքերուն մէջը խորասոյգ
 Պիտի տեսնես թախանձալի պատկերն հողւոյս:
 Միշտ անտարբէ՞ր պիտի մընաս կարօտիս դէմ,

Թէ մաղերովդ ծաղկաբոյր, ոսկեջրովէ՛,
 Երբ յուսահատ ըստասումով ես կ'արտասուեմ,
 Դառն արցունքն իմ աչքերուս պիտի սրբես...

14-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

Հ. -իմ

Կ'անցնին այսպէս կարաւանները օրերուն,
 Եւ յանկարծ օր մը, տարիէն ետք բոլորում՝
 Տըղաս կ'ըլլայ քիչ մ'առաւել իմաստնացած,
 Քիչ մ'առաւել մօտ ապագայ երազներուն:

Թո՛ղ ամէն օր իր խորհուրդէն բան մը թողու
 Անոր սրտին մէջ դըրճմըւած, անջնջիկ,
 Որպէսզի երբ աւարտ գտնէ ամէն տարի,
 Հոն ըլլայ դանձ մը լուսեղէն պատկերներու:

Այսպէս, տըղաս որ կը մեծնայ, գտնէ պիտի
 Ծովէն ո՛չ թէ մարդըրիտ, երկրէն ո՛չ թէ ոսկի,
 Այլ մարդերու սրտէն յոյզեր ու գորովանք՝

Որոնցմով մենք շատ աւելի կը մօտենանք
 Մեր առաջին Անմեղութեան պարտէղներուն՝
 Ուրկէ մեկնած է կարաւանը օրերուն: —

ԱՐՍԵՆ ԵՐԿԱԹ